ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանի՝ 2017 թվականի նոյեմբերի 14-17-ը Կորեայի Հանրապետություն (Սեուլ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Սուրեն Քրմոյան

Գործուղվող անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Գործուղման վայրը և ժամկետները՝ նոյեմբերի 14-17, Կորեայի Հանրապետություն

Հրավիրող կողմը՝ Ասիական զարգացման բանկի և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ԱԶԲ և ՏԶՀԿ) Ասիական և խաղաղ-օվկիանոսյան հակակոռուպցիոն նախաձեռնություն

Գործուղման նպատակը՝ Ասիական զարգացման բանկի և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ԱԶԲ և ՏԶՀԿ) Ասիական և խաղաղօվկիանոսյան հակակոռուպցիոն նախաձեռնության «Ասիա-խաղաղ-օվկիանոսյան տարածաշրջանում հակակոռուպցիոն մթնոլորտի ձևավորում» խորագրով տարածաշրջանային 9-րդ և ղեկավար կազմի 22-րդ համաժողովներին մասնակցություն:

Քննարկված թեմաները՝

Համաժողովների ընթացքում քննարկվել են տարածաշրջանային հակակոռուպցիոն գործակալությունների փորձի փոխանակման, հակակոռուպցիոն քաղաքականության հետագա առաջնահերթությունների, կոռուպցիայի կանխարգելման և միջազգային համագործակցությանն առնչվող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հայաստանի Հանրապետության կողմից վերոնշյալ համաժողովներին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը մասնակցել է դիտորդի կարգավիճակով:

«Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում հակակոռուպցիոն մթնոլորտի ձևավորում» խորագրով 9-րդ տարածաշրջանային կոնֆերանսն իրենից ներկայացնում էր բարձր մակարդակի հանդիպում, որի ընթացքում հստակեցվեցին հակակոռուպցիոն և բարեվարքության մշակույթի խթանման ձեռքբերումներն ու մարտահրավերները, ինչպես նաև սահմանվեցին տարածաշրջանի քաղաքականության ապագա գերակայությունները:

Ձեռքբերումների, մարտահրավերների և ապագա գերակայությունների քննարկման ժամանակ շեշտադրում կատարվեց այն միջոցների վրա, որոնք իրական փոփոխություն կառաջացնեն քաղաքացիների համար և կօգնեն հասնել ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայով, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Հանրային բարեվարքության հանձնարարականով (2017 թվական) և «Կայուն զարգացման 2030 օրակարգ»-ով սահմանված նպատակներին:

Բարձր մակարդակի հանդիպումն իրենից ներկայացնում էր նաև հարթակ՝ հետևյալ թեմաներով փորձի և լավագույն օրինակի փոխանակման համար.

1. Հակակոռուպցիոն ռազմավարության ներառումը ազգային զարգացման օրակարգի մեջ,
2. Միասնական մոտեցման ցուցաբերումը հակակոռուպցիոն և բարեվարքության քաղաքականություններում,
3. Արդյունավետ միջոցների կիրառումը հատուկ ոլորտներում՝ հակակոռուպցիոն և բարեվարքության մշակույթի առաջխաղացման համար:

Հատուկ ուշադրության են արժանացել կոռուպցիայի հետևանքով առաջացած եկամուտների առգրավման և ակտիվների վերադարձման, փողերի լվացման և հարկային հանցագործությունների դեմ պայքարի խնդիրները՝ սկսած հին օրենսդրությունից մինչև մեթոդաբանական և գործնական դժվարությունները ապօրինի ակտիվները բացահայտնելու, որակելու և դրանց վրա կալանք դնելու հարցում:

Քննարկվեցին նաև հակակոռուպցիոն ռազմավարության վերաբերյալ քաղաքացիական գիտակցության և տեղեկացվածության բարձրացմանն ուղղված նախաձեռնությունների փորձերը, ուսումնասիրվեցին այդ ոլորտում գրանցված ձեռքբերումները և դեռևս առկա մարտահրավերները:

Հայաստանի մասնակցության արդյունքները

Ասիական զարգացման բանկի և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ԱԶԲ և ՏԶՀԿ) Ասիական և խաղաղօվկիանոսյան հակակոռուպցիոն նախաձեռնության «Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում հակակոռուպցիոն մթնոլորտի ձևավորում» խորագրով տարածաշրջանային 9-րդ և ղեկավար կազմի 22-րդ համաժողովների շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը մի շարք կարևոր երկկողմ հանդիպումներ է ունեցել, որոնք կնպաստեն կոռուպցիայի դեմ պայքարում միջազգային համագործակցության ամրապնդմանը և խորացմանը:

Հանդիպումների ընթացքում ներկայացվել են կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված Հայաստանի Հանրապետության արձանագրած հաջողությունները, մասնավորապես, հակակոռուպցիոն նոր ինստիտուցիոնալ համակարգի ստեղծումը, քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը, էլեկտրոնային կառավարման գործիքների ներդրումն ու արդյունավետ կիրարկումը, ինչպես նաև հակակոռուպցիոն մի շարք միջոցառումներ:

Հայաստանի Հանրապետությունն, իր լավագույն փորձը ներկայացնելով, նաև պատրաստակամություն է հայտնել համագործակցելու և կիսվելու այդ փորձով ցանկացած այլ պետության հետ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառուպցիայի դեմ պայքարի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունը հիմնականում համագործակցում էր Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հետ, գործուղման արդյունքներով կխորացվի համագործակցությունը Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների հետ:

Սուրեն Քրմոյան
ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ